69-ՐԴ ՆԻՍՏ

13 փետրվարի 1919Թ.

Նախագահում է *Գ. Տեր-Խաչատրյանը:*

Նախագահող - Այսօրվա նիստի օրակարգն է Ամերիկա գնացող պատվիրակության իրավունքները որոշելու մասին ներկայացված օրինագիծը: Այդ օրինագիծը ստացվել է այսօր և հնարավորություն չի եղել հանձնելու որևէ կոմիսիայի, ուստի և կզեկուցեմ օրինագծի մասին:

. Փետրվարի 4-ին խորհուրդը որոշեց Ամերիկա մի պատվիրակություն ուղարկել պարենի համար: Սակայն երբ կառավարությունը որոշել է ուղարկել Մինիստր-նախագահին, հարց է ծագել, թե ի՞նչ իրավունքներ պիտի ունենա Մինիստր-նախագահը: Նա ցորեն գնելիս պետք է Ամերիկայում պարտք վերցնի, զանազան ակտեր պետք է կատարի: Այդ իրավունքները պետք է, որ խորհուրդը տար նրան: Այդ առթիվ կառավարությունը ներկայացրել է հետևյալ օրինագիծը:

Լրացում.
Փետրվարի 4-ին հաստատված օրենքի՝ Մինիստր-նախագահի Եվրոպա և Ամերիկա ուղևորվելու մասին

Հանձնարարել կառավարությանը՝ լիազորել Մինիստր-նախագահ Հովհ. Քաջազնունուն Հայաստանի Հանրապետության անունից կապել և ստորագրել ամեն կարգի համաձայնություններ, պայմանագրեր, պարտավորություններ, վարկային գործողություններ և ուրիշ ակտեր, որ կապ ունեն փետրվարի 4-ին հաստատված օրենքով պ. Քաջազնունու վրա դրած պարտականությունների հետ՝ թույլ տալով նրան իր իրավունքները լիազորել ուրիշներին:

Ահա և օրինագծի ռուսերենը.

Дополнение
К закону от 4 февраля 1919 года о командировании министра-председателя в Европу и Америку

Поручить правительству выдать министру-председателю Качазнуни надлежащие полномочия заключать и подписывать от имени Республики Армении всякие условия, договоры, обязательства, кредитные операции и иные акты, связанные с выполнением возложенной на него по закону от 4 февраля сего года миссии, с правом передоверия другим лицам.

Մինիստր-նախագահ - Ի լրումն նախագահողի բացատրությունների, պետք է ասեմ, որ օրինագծում հիշած լիազորությունները անհրաժեշտ են, և կառավարությունը իր թղթի մեջ մտցրել էր, բայց կասկած հարուցվեց, որ կարող է պատահել այդ դոկումենտը Ամերիկան չընդունի: Ամերիկայում խիստ բաժանում չկա օրենսդրական և վարչական իրավունքների մեջ: Այնտեղ որոշ գործողություններ կատարում է պառլամենտը: Որպեսզի անհապաղությունները չլինեն, հարկ համարվեց, որ խորհուրդը ևս վերոհիշյալ լիազորությունները տա կառավարությանը: Ինչ վերաբերում է վերջին կետին, կարող է պատահել, որ խորհրդականներից մեկը ևս առանձին ակտ կնքի, տարածության պատճառով ինքը՝ Մինիստր-նախագահը, թերևս չկարողանա գնալ, այդ մասին ևս խորհուրդը պետք է լիազորություններ տա: Այս օրինագծի ներկայացնելու պատճառները զուտ իրավաբանական մտահոգություններ են:

Նախագահող - Հայտնում է օրինագծի շտապողականությունը:

Խորհուրդն ընդունում է շտապողականությունը:

Ազատյան - Փետրվարի 4-ին մենք ընդունեցինք Ամերիկա պատվիրակություն ուղարկելու օրինագիծը և Մինիստր-նախագահը պետք է որ 6-ին մեկներ այս-

տեղից: Բայց մինչև հիմա նա չի մեկնել. ուշանալու պատճառը գործին լուրջ չվերաբերվելն է: Վերջերս ապացուցվում է, որ այդ պատվիրակությունը քաղաքական նպատակով է գնում և այն էլ Փարիզ, ոչ թե Ամերիկա: Արդեն տեղեկություն կա, որ 50 վագոն պարեն բերում են Հայաստան: Երկրորդ՝ մոտ ապագայում մենք կարող ենք հաց ստանալ թե՛ Ադրբեջանից, թե՛ Նախիջևանից և թե՛ մեր ներքին շուկայից, ուստի այդ պատվիրակության Ամերիկա գնալն ավելորդ է: Եվս առավել, որ ամերիկական կառավարությունը մի կոմիսիա է կազմել, որը բոլոր պատերազմող պետություններին պետք է հաց մատակարարի: Այդ ազգությունների մեջ մտնում են և հայեր: Ուստի այդ դելեգացիայի առաքումը միանգամայն ավելորդ է, այդ լիազորությունները կարելի է տալ Ահարոնյանին:

Մինիստր-նախագահ - Եթե մինչև այժմ չի գնացել Ամերիկա մեկնող պատվիրակությունը, դրա պատճառը մինիստրությունից երեքի բացակայությունն է, որից մեկը բոլորովին չկա, իսկ երկուսը անհետաձգելի գործով գնացել են Թիֆլիս: Փետրվարի 4-ին, երբ Ամերիկա ուղարկվելիք պատվիրակության օրինագիծը ընդունվեց, ես ասացի՝ մինչև մինիստրները չվերադառնան Թիֆլիսից, ես չեմ մեկնի, և այդ առթիվ պատգամավոր Ազատյանը ոչինչ չասաց, ուրեմն ընդունեց: Այն դիտողությունը, թե այս դելեգացիան քաղաքական նպատակով է գնում, դա հիմնվա՞ծ է մի որևէ տվյալի վրա, թե լոկ հայտարարություն է: Եթե պատգամավոր Ազատյանը չունի որևէ հիմունք, այն ժամանակ նա պետք է քաղաքավարություն ունենա և չպետք է նման հայտարարություն անի, որովհետև դրանով նա մեղադրում է Մինիստր-նախագահին, որը ամենևին այդ մտադրությունը չունի: Մի որպես երևակայեցեք, որ այդ դելեգացիան իր վրա դրված պարտականությունները չկատարի. արդյո՞ք նա կարող է քաղաքական հարցեր վճռել, երբ նրան այդ լիազորությունները չեն տրված:

Այն դիտողությունը, թե մենք մոտակա շուկաներից հաց ենք ստանում, դա զարմանալի չէ, հենց օրինագծի բացատրական մասի մեջ այդ առթիվ հիշատակված է: Բայց պարզ է, որ այդ ստանալիքը չի կարող լրացնել մեր կարիքը: Մինչև հունձը մեզ հարկավոր է 7 միլիոն փութ ցորեն: Մինչդեռ Կարսից մենք 250 հազար փութ, Նախիջևանից և Ադրբեջանից 100 հազար փութ հազիվ ստանանք: Հյուսիսային Կովկասից մեծ սպասելիքներ չենք կարող ունենալ, որովհետև ամբողջ Ռուսաստանը պետք է այնտեղից հաց ստանա: Եվ այսպես մոտակա շուկաներից մեկ միլիոն փութ հազիվ ստանանք:

Եթե խորհուրդը ուրիշ նպատակով չի ցանկանում այդ պատվիրակությունն ուղարկել, թող ասի իր հիմունքները:

Տեր-Մարտիրոսյան - Օրինագիծը ընդունված է, և Ազատյանի առաջարկը իզուր է: Բայց մի հարց: Լիազորություններ տված է միայն պարենի համար. կարող է և փոխառության հարց լինել. այն ժամանակ ի՞նչ պետք է անի այդ դելեգացիան:

Մինիստր-նախագահ - Այդ մասին կհաղորդվի ձեզ և համաձայն ձեր կարգադրության քայլեր կարվեն:

Ազատյան - Մեր կասկածներն անհիմն չեն: Հայ-վրացական պատերազմից 20 օր առաջ Մինիստր-նախագահը ասաց, որ պատերազմ չի լինի, սակայն եղավ: Մեր վարած քաղաքականությունը այնպես է, որ մենք ձգտում են великодержава-ի: Փամբակի շրջանում Դենիկինի ներկայացուցիչը զորահավաք էր անում և ուղարկում Վրաստանի վրայով Հյուսիսային Կովկաս, և մենք թույլ էինք տալիս առանց արգելքի՝ գիտենալով, որ Դենիկինի բանակը հակահեղափոխական է: Մենք ունենք պատվիրակություն և նրա լիազորությունները չգիտենք: Տաճկահայ համագումարում ասվեց, որ Ահարոնյանը Միացյալ Հայաստանի հայտարարություն է արել: Թերևս նման հայտարարություն անի նաև Քաջազնունին:

Խորհուրդը որոշել է 25-ից բարձր տարիք ունեցողներին զորաշարքերից ազատել, բայց մինչև այժմ չեն բաց թողնում: Ինչ վստահություն հայտնել այսպիսի կառավարությանը: Մենք գերադասում ենք քաղաքական նպատակները զոհել պարենավորման հարցին:

Երևանի Հարությունյան - Նախկին օրինագծով այդ պատվիրակությանը տրվում է միայն պարենավորման լիազորություններ, մինչդեռ Ահարոնյանի նախա-

գահությամբ դելեգացիան քաղաքական նպատակ ունի: Պետք է, որ այս դելեգացիան ևս քաղաքական նպատակ ունենա, որովհետև Մինիստր-նախագահն է գնում:

Մինիստր-նախագահ - Այս միսիայի հետ քաղաքական հարցեր կապված չեն: Մինիստր-նախագահը այստեղից հատուկ հանձնարարությամբ է գնում, դա պարենավորման հարցն է:

Մինախորյան - Մեր ֆրակցիան որևէ փոփոխություն չի մտցնում փետրվարի 4-ի նիստի որոշման մեջ: Սովի խնդիրը մեծ է և դրա դեմ պետք է կռվել: Պետք է պատվիրակություն ուղարկել Ամերիկա, բայց ոչ Մինիստր-նախագահին, այլ՝ պարենավորման մասնագետ մարդկանց: Այն դիտողությունը, թե մենք ցորեն ենք ստանում, դա երբեք դրությունը չի փոխում, սովը իր ուժի մեջ է և պետք է ուղարկել դելեգացիան:

Նախագահող - Ես քվեարկություն եմ դնում օրինագիծը՝ հոդված առ հոդված:

Ազատյան - Խնդրում եմ մեր առաջարկը քվեարկել:

Վրացյան - Մենք այդպիսի առաջարկ չենք կարող քվեարկել, որովհետև օրվակարգի մեջ այդ հարցը չի դրված:

Ազատյան - Եթե այդ առաջարկը չենք կարող քվեարկել, ուրեմն այս նիստն էլ ապօրինի է:

Նախագահող - Քվեարկվում է սոց.-դեմոկրատների հետևյալ առաջարկը.

«Նկատի ունենալով փետրվարի 4-ից հետո ստեղծված իրերի նոր դրությունը Եվրոպա և Ամերիկա գնացող պատգամավորության վրա դրվող պարտականությունների կիրառումն հանձնարարել Փարիզում գտնվող Հայաստանի ներկայացուցչությանը»:

Առաջարկն ստանալով 4 կողմ ձայն, չի ընդունվում:

17 թեր ձայնով խորհուրդը ընդունում է անցնել օրինագծի հոդված առ հոդված քննությանը:

Նախագահող - Կարդում է օրինագիծը. (տեքստը ռուսերեն է և բաց է թողնված):

Ազատյան - Այդ հոդվածին մենք հիշյալ հավելումն ենք անում "И иные экономические и финансовые, но не политические акты".

Մինիստր-նախագահ - Եթե մեկին լիազորում ենք մի բանի համար, նրանից դուրս նա իրավունք չունի գործելու, այնպես որ "Не политические акты" խոսքը ավելորդ է:

Ազատյան - Կարող է պատահել, որ Ամերիկան պարենի համար քաղաքական խնդիրներ ևս հարուցի, հենց դրա համար մենք մեր առաջարկը հետ չենք վերցնում:

Խորհուրդը 5 կողմ ձայնով չի ընդունում սոցիալ-դեմոկրատների առաջարկը:

Նախագահող - Քվեարկության եմ դնում սոցիալ-դեմոկրատների հետևյալ առաջարկը. Исключить: "С правом передоверия другим лицам".

Առաջարկը ստանալով 4 ձայն՝ չի անցնում:

Քվեարկության է դրվում ժողովրդական կուսակցության հետևյալ առաջարկը. "И иные экономические и финансовые акты".

Առաջարկը ստանալով 7 ձայն կողմ՝ չի անցնում:

Նախագահող - Ուրեմն քվեարկվում է օրինագիծը:

Մինիստր-նախագահ - Պարոն նախագահ, խնդրում եմ իմ օրինագիծը քվեարկել Ձեր խմբագրությամբ:

Նախագահող - Քվեարկության է դրվում հետևյալ խմբագրությունը.

"Представить Министру-председателю Качазнуни право заключать и подписывать от имени Республики Армении всякие условия, договоры, обязательства, кредитные операции и сделки и иные акты, связанные с выполнением возложенной на него по закону от 4 февраля сего года миссии с правом передоверия другим лицам и поручить Правительству выдать Министру-председателю Качазнуни надлежащие полномочия согласно сего закона и закона [от] 4 февраля 1919 года.

Սույն խմբագրությունը ընդունվում է խորհրդի կողմից:

Խորհուրդը օրինագծի III ընթերցումը համարում է կատարված:

Քվեարկության է դրվում օրինագիծն ամբողջությամբ և վերջնականապես հաստատվում է որպես օրենք:

Մինախորյան - Խնդրում եմ մեր ֆրակցիայի կողմից արձանագրության մեջ մտցնել հետևյալը. «Համաձայն փետրվարի 4-ի նիստին արտահայտած մեր պատճառաբանությունների, մենք չժխտելով պարենավորման համար Ամերիկա պատվիրակություն ուղարկելու անհրաժեշտությունը՝ ներկա պատգամավորության մեկնումը այդ կազմով և այդ լիազորություններով ավելորդ եմ համարում:

Նկատելով խնդիրը իբրև սկզբունքային մի հարց, ձեռնպահ ենք մնում այդ պատգամավորության լիազորությունների քննության մեջ, որովհետև ամեն մասնակցություն այդ խնդրում կապված է պատասխանատվության հետ, որ չէինք ուզիլ հանձն առնել այդ առիթով»:

Տ. Մուշեղյան - Մանդատային հանձնաժողովը ստացել է հետևյալ մանդատը.

«Ռ.Ս.Դ.Բ. կուսակցության Հայաստանի կենտրոնական կազմակերպիչ բյուրոն Հայաստանի Խորհրդի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի հեռացած անդամ ընկ. Աբրահամ Մալխասյանի փոխարեն ընտրել է երդվյալ հավատարմատար ընկ. Հովհաննես Արիստակեսյան Դուրգարյանին՝ իբրև նույն ֆրակցիայի 6-րդ անդամ, որի մասին հայտնում ենք արգո նախագահության»:

Բոլոր ձևականությունները ճիշտ են կատարված և մանդատային հանձնաժողովը միաձայնությամբ ընդունել է:

Խորհուրդ նույնպես ընդունում է Հովհ. Դուրգարյանին՝ որպես անդամ:

Այնուհետև կարդացվում է խորհրդի անդամ Ա. Բաբալյանի հարցումը՝ ուղղված խնամատարության մինիստրին, որից հետո նիստը [փակվում է]:

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 139-143: Բնագիր: Ձեռագիր: